ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

III

ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-126

Միհրան Գալստյան, *պ.գ.դ., դոցենտ*
ՀԱԻ / ԵՊՀ

«ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԸ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՐԴԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԼՈՍ-ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿԸ

Արդի հայկական Սփյուռքում տեղի ունեցող նոր գործընթացների, ինքնության փոփոխության, բազմազանության պայմաններում արդյոք նպատակահարմար է կիրառել «հայրենադարձություն» եզրույթը՝ միգրացիոն այն խմբերի և սերունդների նկատմամբ, որոնց ծնողավայրը ՀՀ տարածքը չէ: Այս խնդրի քննարկումն ունի արդիական ու կիրառական նշանակություն, քանի որ հայրենադարձությունը հռչակվել է որպես ՀՀ միգրացիոն քաղաքականության մաս, որի նպատակը՝ Սփյուռքի ներուժի ներգրավումն է պետության տնտեսական և ժողովրդագրական զարգացման գործում:

Լոս-Անջելեսի հայերի տարբեր սերունդներից, Սփյուռքից ՀՀ ներգաղթած ընտանիքներում կենսագրական հետազոտության և փորձագիտական մեթոդով հավաքված նյութերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հայրենադարձության սահմանումը՝ որպես վերադարձ «հայրենիք՝ Հայաստան», որոշակի խնդիրներ է հարուցում Սփյուռքի տարբեր սերունդների և միգրացիոն խմբերի մեջ: Սփյուռքի քաղաքականության տիպաբանության մեջ «հայրենադարձություն» եզրույթն առավել բնութագրական է առաջին սերնդի աշխատանքային *միգրանտ*ների համար, որոնք իրենց հայրենիքի/պետության հետ հստակ կապեր ունեն: Հոդվածում նաև քննական վերլուծության են ենթարկվում նոր եզրույթի կիրառման վերաբերյալ առաջարկություններն ու մոտեցումները:

Հիմնաբառեր՝ Սփյուռք, հայրենադարձություն, հայրենիք, վերադարձ, *միգրացիոն* խմբեր, ինքնություն, տարասեռ:

Ներածություն

Միջազգային իրավական փաստաթղթերում *հայրենադարձություն*[1] եզրույթը վերաբերում է Երկրորդ Աշխարհամարտի ռազմական գործողությունների հետևանքով նախկին բնակության երկրները լքած հարյուր հազարավոր մարդկանց՝ հայրենիք վերադարձին: Դա տարածվում էր ռազմագերիների, տեղահանված անձանց, փախստականների, արտագաղթածների քաղաքացիական իրավունքների վերականգնման և հայրենիք վերադարձի վրա: Միգրացիայի միջազգային կազմակերպությունն այդ եզրույթը սահմանել է որպես *միգրանտ*ի ներկա բնակության վայրից վերադարձ՝ բնակության նախորդ երկիր կամ *միգրանտ*ի հայրենիք: ՄԱԿ-ն այդ եզրույթը սահմանել է որպես միջազգա-

[1] Լատիներեն՝ ռեպատրիացիա re- «կրկին», patria «հայրենիք»:

յին *միգրանտ*ի վերադարձ այն երկիր, որի քաղաքացին է վերջինս, և որն ունի տվյալ երկրում առնվազն մեկ տարի բնակվելու մտադրություն:

ՄԱԿ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված է, որ «*Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, այդ թվում՝ սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք»:* Միջազգային իրավունքում հայրենադարձության քաղաքականությունը կոչվում է վերադարձի իրավունք կամ իրավունք՝ վերադառնալու այն երկիր, որը համարվում է տվյալ մարդու հայրենիքը: Հայրենադարձությունը ազգային պատկանելություն կամ ինքնագիտակցություն ունեցող անձանց զանգվածային վերադարձն է, մշտական բնակության հաստատումն ու իրավունքների վերականգնումն իրենց հայրենիքում, որտեղից նրանք գաղթել կամ վտարվել են տարբեր պատճառներով[2]:

Վերջին 20 տարվա ընթացքում մի շարք պետություններ արտերկրում իրենց սփյուռքը կառավարելու համար ստեղծել են կազմակերպություններ, որոնց հիմքում ընկած պետականակենտրոն մոտեցման արդյունքում նույնականացվում են «հայրենիք»-«պետություն» հասկացությունները: Որպես այդպիսիք կարելի է նշել Արտերկրի իոլանդացիների ստորաբաժանումը, Սերբիայի սփյուռքի նախարարությունը, ՀՀ սփյուռքի նախարարությունը, որը հետագայում վերանվանվեց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ: Դրանց հիմնական նպատակը՝ սփյուռքի ներուժի ներգրավումն է՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական նախագծերի իրականացման, *մոբիլիզացիա*յի, ինքնության հիմքերի կառուցման և պահպանման, այլազգի միջավայրում չձուլվելու համար: Այդ մոտեցումն իր ազդեցությունն է թողնում նաև վերջին շրջանի գիտական ուսումնասիրությունների ուղղվածության վրա, քանի որ որոշ հետազոտողներ առավել հաճախ սփյուռքը դիտարկում են որպես պետության հետ անմիջական կապ ունեցող *միգրանտ*ների խումբ, կարևորում են հայրենիքի հետ իրական կապերը և պետությունների կողմից սփյուռքի անդրազգային կառավարման խնդիրների ուսումնասիրությունը[3]:

Այնուհանդերձ, խնդրահարույց է մնում «հայրենադարձություն» եզրույթի կիրառումը ավանդական Սփյուռքի այն հատվածի համար, որի ծննդավայրը ՀՀ տարածքը չէ: Այս առումով՝ հայրենադարձության սահմանումը՝ որպես վերադարձ հայրենիք, որոշակի խնդիրներ է հարուցում «հայրենիք» եզրույթի հարցում, քանի որ Սփյուռքի տարբեր սերունդներ այն կարող են չդիտարկել որպես պատմական հայրենիք կամ ծագման երկիր: Խորհրդային շրջանի ներգաղթի ժամանակ էլ տարբեր երկրներից ՀԽՍՀ վերադարձածները նրա նախկին քաղաքացիները չեն եղել: Ավանդական Սփյուռքի տարբեր սերունդների համար ՀՀ այժմյան տարածքը ոչ բոլոր դեպքերում է, որ ընկալվում է որպես պատմական հայրենիք, քանի որ նրանց մեծ մասի համար պատմական հայրենիքը շարունակում է մնալ Արևմտյան Հայաստանը:

Թուրքիայի իրականացրած Հայոց Ցեղասպանությունից և իրենց բնիկ տարածքներից բռնի տեղահանությունից հետո աշխարհում սփռված հայերը

2 Գևորգյան 2013, 10–11:

3 Kunz 2012, 103–105.

ներկայիս ՀՀ-ը դիտարկում են որպես համայն հայության կենտրոն: Եթե ելնում ենք հայրենադարձության վերաբերյալ վերը նշված սահմանումից, ապա սփյուռքահայերի առաջին սերնդի համար պատմական հայրենիքը Արևմտյան Հայաստանն է, որտեղից նրանք բռնագաղթել են 1915 թ. Հայոց Ցեղասպանության պատճառով: Նրանց պատմական և հավաքական հիշողությունը կապված է այդ տարածքին և հայրենիք վերադարձի գաղափարին: Մյուս կողմից, մի շարք հետազոտություններում «հայրենադարձություն» եզրույթի կիրառման ժամանակավրեպությունը պայմանավորված է Սփյուռքի զարգացման ընթացքում տարբեր մշակութային շերտերի ձևավորման, ինքնության փոփոխության և ոչ-միատարր դառնալու հանգամանքով, որը ենթադրում է նաև հայկական Սփյուռքի վերադարձի հետ կապված պատմական բարդույթի վերանայման խնդիրը[4]: Բացի այդ, Սփյուռքի վերադարձի հարցում դեռևս պատշաճ չեն քննարկվում ՀՀ իրական կարողություններն ու հնարավորությունները, քաղաքական, սոցիալ-տնտեսական ներուժի հարցը: Այստեղ երբեմն ցուցաբերվում է կարծրատիպային մոտեցում՝ հաճախ զուգահեռներ անցկացնելով 1946–1948 թթ. «մեծ հայրենադարձության» հետ, հաշվի չառնելով պատմական ժամանակահատվածների յուրահատկությունները:

Հայրենադարձությունը համարվում է ՀՀ *միգրացիոն* քաղաքականության մաս, և այդ առումով ՀՀ-ում ընդունվել են իրավական մի շարք փաստաթղթեր[5]: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածն արձանագրում է, որ ՀՀ-ը հայկական Սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը: Այսուհանդերձ, ՀՀ-ում բացակայում է «Հայրենադարձության մասին» օրենքը, որի հայեցակարգը Կառավարության հավանությանն է արժանացել դեռևս 2010 թ., բայց մինչ այժմ ԱԺ-ի կողմից չի ընդունվել: Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակին կից 2023 թ. հունիսից գործում է Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը, որի հիմնական նպատակը՝ աշխարհի տարբեր երկրներից հայերի՝ ՀՀ հայրենադարձվելու գործընթացի դյուրացումն է: Հայրենադարձության երևույթը և եզրույթը կարևոր տեղ են գրավում նաև կառավարության *դիսկուրս*ում. այդ մոտեցումներն իրենց ձևակերպումն են ստացել 2019 թ. Լոս-Անջելեսի հանրահավաքում՝ ՀՀ վարչապետի ելույթում, այնուհետ՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի հարցազրույցներում[6]:

---

4 Հոդվածի հիմքը՝ հետևյալ աշխատությունում [Գալստյան, Գալստյան 2023] տեղ գտած մի շարք դրույթներն են:

5 ՀՀ օրենքը «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=73249 (դիտումը՝ 20.03.2024); ՀՀ օրենքը ՀՀ քաղաքացիության մասին, https://www.irtek.am/views/act.aspx?aid=230 (դիտումը՝ 20.03.2024); ՀՀ օրենքը Փախստականների ապաստանի մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=48710 (դիտումը՝ 20.03.2024):

6 «Զարեհ Սինանյանը հայրենադարձության խնդրի մասին. «Անցյալում ինչ-որ չափով միտումնավոր է արվել, որպեսզի կոռուպցիոն հնարավորություններ ստեղծվեն»» // «Առավոտ», 2020, փետրվարի 27 https://www.aravot.am/2020/02/27/1096668/ (դիտումը՝ 27.03.2020):

Մեթոդաբանություն

Կիրառվել են կենսագրական հետազոտության, փորձագիտական հարցման և փաստաթղթերի վերլուծության մեթոդները: Կենսագրական հետազոտության մեթոդով 2020 թ. դեմ առ դեմ և հեռավար ZOOM հարթակով հարցազրույցներ են իրականացվել Լոս-Անջելեսի հայերի տարբեր սերունդների և վերջին 30 տարիներին ՀՀ ներգաղթած ու բնակություն հաստատած, համապատասխանաբար՝ 20 և 19 ընտանիքներում: Իրականացվել է 21 փորձագիտական հարցազրույց (10-ը՝ Սփյուռքում, 11-ը՝ ՀՀ-ում): Փորձագետ են համարվել այդ ոլորտի հետազոտողները, ՀՀ-ում Սփյուռքի քաղաքականությամբ զբաղվող մասնագետները և սփյուռքյան կազմակերպությունների ներկայացուցիչները: Ուսումնասիրվել են Սփյուռքին և հայրենադարձությանն առնչվող միջազգային և ՀՀ իրավական մի շարք փաստաթղթեր, կատարվել է տեսական գրականության, խորհրդային և ետխորհրդային ՀՀ հայրենադարձությանը վերաբերող վիճակագրական, պատմական, ազգագրական նյութերի և այլ աղբյուրների, զանգվածային լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումների, առկա հետազոտությունների վերլուծություն:

Սփյուռք և Հայրենիք. տեսական քննարկումներ

Հայրենադարձություն եզրույթն անմիջականորեն առնչվում է Սփյուռք-Հայրենիք-Պետություն առանցքին, այդ իսկ պատճառով՝ այս մասում անդրադարձ ենք կատարում, թե ի՞նչ է սփյուռքը, ի՞նչ է հայրենիքը սփյուռքի համար, որքանո՞վ են պետության և հայրենիքի սահմանները համընկնում, և դրանց վերաբերյալ ի՞նչ տեսական մոտեցումներ գոյություն ունեն:

Դասական սփյուռքի հայեցակարգը կառուցված է էթնիկ պատկանելության, բռնի տեղահանման, ինչպես և հայրենիքի հանդեպ կողմնորոշման շուրջ. ընդունող հանրությունից տարբերակված ինքնությունը, ինչպես և համայնքային սահմանների պահպանումը հիմնաքարային է սփյուռքյան համայնքների գոյության համար[7]: Ամերիկացի քաղաքագետ Վ. Սաֆրանի մոտեցման հիմքում հայրենիքի իդեալականացումն է, որոշակի աշխարհագրական տարածքի նկատմամբ հավաքական հիշողությունը, վերադարձը և հավաքական պատասխանատվությունը՝ հայրենիքի անվտանգության, պահպանման և բարգավաճման համար: Ըստ նրա՝ հայրենիքը առասպելական արժեք ունի սփյուռքի համար: Հայրենիքի սուրբ վայրերն ու հուշարձանները համարվում են նախնիների հիշողություններ[8]: Գ. Շեֆֆլրի կարծիքով՝ սփյուռքի գոյատևման համար, բացի անհատական և ընտանեկան հույզերից, կարևոր են նաև ավելի մեծ էթնոազգային միավորի պատկանելու զգացումը և գիտակցությունը, որի հետ կապված են համերաշխությամբ և ծառայելու նվիրումով, և հրապարակավ նույնականացումը այդ խմբին[9]:

---

7 Այս հարցերի շուրջ առավել մանրամասն տե՛ս Armstrong et al. 1976; Smith 1986; Safran 1991; Shain 1994; Vertovec 1997.

8 Safran 2009, 78–80.

9 Sheffer 2003, 317–320.

Ամերիկացի քաղաքագետ Ջ.Արմսթրոնգն անդրադառնալով այս խնդրին՝ կարևորել է սփյուռքի միաձույլ լինելու հանգամանքը՝ հայրենի երկրում ապրող մարդկանց հետ հուզական, ազգակցական և ծագումնաբանական կապեր ունենալը: Խ. Թոլոլյանը, որպես «սփյուռք» եզրույթի կարևոր տարբերակիչ հատկություններ, նշում է սփռվածությունը, ազգային *ֆրավմատիկ* հիշողությունը, հավաքական ինքնությունը, հայրենիքի հետ ունեցած կապերը[10]: Նա նշում է, որ երբ խմբի մեջ բացակայում է հայրենիքի ընկալումը, և կա կազմակերպչական վարքի պակասուրդ, սփյուռքը դառնում է ընդամենը կարծական երևույթ՝ զուրկ միջազգային և պետական համակարգերի վրա ազդեցությունից:

Ռ. Բրուբեյքըրը նշում է, որ «երեք հիմնական տարրերը լայնորեն ընկալվում են սփյուռքի բաղկացուցիչ մաս». *ֆրավմատիկ* հիշողությունը, հայրենիքից դուրս լինելը, հայրենիքի նկատմամբ կողմնորոշումը (անկախ նրանից՝ իրական, թե երևակայական է այդ հայրենիքը) և ընդունող հանրության մեջ էթնիկ սահմանների պահպանումը[11]: Նա կարևորում է հայրենիքի պատմական ընկալումը և պնդում, որ հայրենիքը կարևոր դեր ունի սփյուռքի *մոբիլիզացիա*ի համար: Ավելին, եթե հայրենիքը բացակայում է, սփյուռքը զրկվում է միջազգային և ազգային կառույցների ազդեցությունից: Նրա կարծիքով՝ էթնիկ հայրենիքի և ազգային պետության սահմանները չեն նույնանում, քանի որ սփյուռքացման հետևանքով հայրենիքը դադարում է ֆիզիկապես գոյություն ունենալ կամ խիստ փոխվում է, բայց շարունակում է ծառայել որպես սփյուռքյան ինքնության ձևավորման հիմք: Օ. Ուահլբեքի կարծիքով՝ սփյուռքը հայրենիքի գաղափարը վերարտադրում է հավաքականորեն, երբ հայրենիքի գոյությունն անգամ վիճարկված է[12]: Ըստ Ս. Վերտովեկի՝ սփյուռքի գիտակցված հավաքական ինքնության պահպանման հիմքում ընկած են հետևյալ կարևոր իրողությունները.

1. «էթնիկ հայրենիքի», պատմական և հստակ աշխարհագրական տարածքի հանդեպ պատկանելության զգացումը,
2. փոխադարձ հարաբերությունների և հաղորդակցման ցանցերի *ինստիտուցիոնալացում*ը պետական սահմաններից դուրս, համայնքային նորատիպ կազմակերպությունների հիմնումը,
3. հայրենիքի հետ ուղղակի կամ անուղղակի կապերի պահպանումը,
4. համախմբման նպատակով այլ երկրներում ապրող իրենց էթնիկ հանրույթների հետ կապերի զարգացումը,
5. ընդունող հանրությունում *ինտեգրվել*ու կարողության կամ ցանկության պակասը, օտարվածության, մերժման, առավելության կամ որևէ այլ տիպի «տարբերության» զգացումի խթանումը[13]:

Այսպիսով, արդի տեսություններն ուսումնասիրում են, թե ինչպես է հայրենիքի հայեցակարգն օգտագործվում որպես *կոլեկտիվ մոբիլիզացիա*ի հիմք՝

10 Այս հարցերի շուրջ առավել մանրամասն տես Armstrong 1976; Tölölyan 1996.

11 Brubaker 2005, 1–19.

12 Wahlbeck 2002, 221–225.

13 Vertovec 1997, 278–280.

որոշակի սոցիալական, քաղաքական, տնտեսական նպատակների, ներառյալ՝ հայրենադարձության հասնելու համար:

«Հայրենադարձություն» եզրույթի քննական մոտեցումները Սփյուռքի սոցիալ-մշակութային բազմազանության համատեքստում

Լոս-Անջելեսի հայ համայնքի անդամներն այնտեղ են ներգաղթել մի շարք երկրներից՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ պատճառներով: Համայնքը կարելի է բաժանել «ավանդական» և «նոր» Սփյուռքի, որոնք միմյանցից տարբերվում են ներգաղթելու ժամկետներով, պատճառներով, կառուցվածքով և Հայրենիքի մասին պատկերացումներով: Ավանդական Սփյուռքին են պատկանում Ցեղասպանությունից հետո Առաջավոր Ասիայում, եւրոպական երկրներում, ԱՄՆ տարբեր նահանգներում բնակություն հաստատած և այնուհետև Լոս-Անջելես ներգաղթածները, իսկ «նոր» Սփյուռքին՝ 1990-ականներից հետո ՀՀ-ից և նախկին ԽՍՀՄ այլ պետություններից / ԱՊՀ-ից արտագաղթածները:

«Ավանդական» համայնքը միատարր չէ. այն, իր հերթին, բաժանվում է մի շարք ենթահամայնքների: Դրանց մի մասը համախմբվելու, իրենց բնորոշ մշակութային հատկությունները, սովորույթները պահպանելու և սերունդներին փոխանցելու նպատակով ինքնակազմակերպվել և ստեղծել են հայրենակցական միություններ: Ի տարբերություն ավանդականի՝ ՀՀ-ից և ԱՊՀ երկրներից մեկնած հայերը չեն եղել այդպիսի անդրազգային՝ ավանդական, բարեգործական կազմակերպությունների անդամ, չեն ունեցել համայնքային-մշակութային կազմակերպություններին անդամակցելու այդ փորձը: Բացի այդ, խորհրդային տարիներին եկեղեցու հետ կապը թույլ է եղել: Տեղափոխվելով Լոս-Անջելես՝ գործող հայկական սփյուռքյան կազմակերպությունների հետ նրանց գործակցությունը շատ թույլ է եղել՝ պայմանավորված վերոնշյալ հանգամանքով: Այդ գործակցությունն առանձին դեպքերում առնչվել է Ցեղասպանության կամ Արցախի հարցերին: Ի տարբերություն ավանդական Սփյուռքի՝ գերակշիռ մեծամասնությունը սերտ կապված է ՀՀ հետ:

Լոս-Անջելեսի համայնքում, բացի «ավանդական» և «նոր» Սփյուռք բաժանումից, առանձնացվում է նաև «նոր ամերիկահայերի» շերտը, որն ավանդական Սփյուռքի երիտասարդ սերունդն է՝ ԱՄՆ-ում ծնվածները: Նրանց մեջ կան շատերը, որ ավանդական կառույցներին չանդամակցելը կամ Հայրենիքի մասին աղոտ պատկերացում ունենալը ոչ թե ինքնության կորուստ են համարում, այլ ազատագրում՝ իրենց կաշկանդող ավանդույթներից և սովորույթներից:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Լոս-Անջելեսի համայնքը, ըստ ելքի երկրների, այնտեղ ներգաղթելու պատճառների, սերունդների տարբերության, մշակութային առումով բազմատարր է: Այդ շերտերն իրարից տարբերվում են նաև ՀՀ հետ իրենց կապվածությամբ, որն էլ իր ազդեցությունն է թողնում հայրենադարձության կողմնորոշումների վրա: Նշված խմբերի մեջ հայրենադարձության շարժառիթների ձևավորումն ընթանում է նաև վերը նշված անդրազգային կազմակերպությունների գործունեության ներքո, որոնք այդ գործընթացը կարող են ուղղորդել և վերահսկել:

Որոշ փորձագետներ «հայրենադարձություն» եզրույթը համարել են ժամանակավրեպ, որը, ըստ նրանց, ամբողջովին չի արտացոլում Սփյուռքում տեղի ունեցող ներկա գործընթացները.

«Շատ զարմանալի է, որ այս տերմինն այսքան կիրառվող է դարձել Հայաստանում, որովհետև գոնե արևմտյան Սփյուռքի համար դա ճիշտ տերմին չէ: Այս տերմինի օգտագործումն՝ առանց այն քննելու, կարծում եմ, խնդրահարույց է, որովհետև դա Սփյուռքի մասին փորձառությունը պարզունակացնում է, և պարզունակացնում է այն, որ առավել քան մեկ դար Սփյուռքը ապրել է որպես հայ և չի փոխվել: Հայրենադարձությունը, գիտեմ, քաղաքական տերմին է, և շատ դժվար է ուրիշ տերմին գտնել՝ նկարագրելու համար արևմտյան Սփյուռքի փորձառությունը, բայց այն կարևոր տերմին է և կիրառելի է հատկապես հետխորհրդային Սփյուռքի համար: Ինչու է պրոբլեմատիկ, որովհետև, ես կարծում եմ, այս տերմինը որոշակի կերպով թույլ չի տալիս հասկանալ Սփյուռքը, քիչ է կարևորում Սփյուռքի կյանքը: Եւ (կամ) այն, որ հետվերադարձը դիտարկում է որպես վերջնական նպատակ, բայց դա իհարկե հետվերադարձ չէ, որովհետև նրանք այնտեղ չեն էլ եղել ի սկզբանե: Եւ բոլոր այդ բարդությունները, որ ունի Սփյուռքը, կարծես ծածկում ենք այս տերմինն օգտագործելով» (փորձագետ, Մեծ Բրիտանիա)[14]:

Փորձագետներից մեկը այն կարծիքին է, որ «հայրենադարձություն» եզրույթը կարելի է կիրառել միայն Սփյուռքի որոշակի խմբի նկատմամբ, և դրա կիրառումը վերաբերում է մարդկանց նեղ շրջանակի, որին կարելի է դիտարկել որպես հայրենադարձ.

«Հիմա շատ անգամ հայրենադարձություն են ասում, բայց սա հստակ չէ, որովհետև հայրենադարձները նրանք են, ովքեր Հայաստանից են գնացել, ասենք, ՌԴ կամ այլ երկրներ, նրանք գնում են հայրենիք: Իսկ եթե ֆրանսահայը կամ եգիպտահայը Հայաստան պիտի հաստատվին, անոնք հայրենադարձներ չեն: Մի փոքր պրոբլեմատիկ տերմին է, ակադեմիական վերլուծության ենթակա է: Այսինքն՝ վերադառնալու համար պետք է նախկինին ճանաչել, դրա մի մասը լինել, եթե վերադառնում ես ծանոթ տեղ, այնտեղ, որտեղ փորձառություն ես ունեցել: Երբ մարդիկ, օրինակ, Լիբանանից գնում են Ամերիկա, դա ամերիկադարձություն չէ, նույն կերպ կան մարդիկ, որ Հայաստան չեն եղել, Արարատ, Մասիս, Էջմիածին իմանալով՝ Հայաստան կուգան, դա վերադարձ չէ» (փորձագետ, Մեծ Բրիտանիա):

«Հայրենադարձություն» եզրույթը մարտահրավեր է նետում Սփյուռքի էթնիկ պատկանելության, քաղաքացիության, *ինտեգրման*, մշակութային տարբերությունների ավանդական պատկերացումներին և սպասելիքներին: Անդրադառնանք սփյուռքի հիմնախնդիրներով զբաղվող հեղինակների մի քանի տեսակետների, որոնք անդրադարձել են այս եզրույթին:

[14] Փորձագետների հետ հարցումների մի մասն իրականացվել է հեռավար ZOOM հարթակով, 2020 թ.:

Հասարակագետ Հ. Ռիդինգն այն սահմանում է որպես անձի՝ սեփական ծագման երկիր վերադառնալը, դրան օժանդակելը կամ կոչ անելը: Ըստ Ֆ. Ռագացիի՝ «հայրենադարձության» գաղափարը վերաբերում է առաջին սերնդի աշխատանքային *միգրանտ*ներին, որոնք հստակ կապեր ունեն իրենց հայրենիքի/պետության հետ[15]:

Հայրենադարձությունը մարտահրավեր է նետում էթնիկ պատկանելության, քաղաքացիության, ինտեգրման, ազգային պատկանելության, մշակութային տարբերությունների ավանդական պատկերացումներին: Քաղաքագետ Ս. Գասպարյանը հավելում է մի քանի հայեցակետեր. նախ՝ նա նշում է, որ կորած ազգային պատկանելության ձեռքբերումը կամ, ընդհանուր առմամբ, Հայրենիքի հետ պաշտոնական կապերի հաստատումը սփյուռքահայերի առաջնահերթությունը չէ: Ավելին, նա օգտագործում է «խորթ հայրենիք» եզրույթն այն դեպքում, երբ *«երկու սուբյեկտներ (սփյուռքահայերը և ՀՀ-ը) ծագումով չեն առնչվում, սփիպված են արտաքին ուժերի միջամտությամբ սերտ հարաբերությունների մեջ մտնել»*[16]:

Մշակութային մարդաբան Կ. Պավլովսկան հավելում է, որ Սփյուռքի և Հայրենիքի միջև հեռավորությունը ոչ միայն աշխարհագրական, այլև խորհրդանշական բնույթ ունի և վերաբերում է նախնիների ու ավանդույթների մասին պատկերացումների տարբերությանը[17]: Սփյուռքահայերի և ՀՀ կապը, ըստ քաղաքագետ Բ. Անդերսոնի, արտացոլում է «երևակայական համայնքների» գոյությունը, որոնք ունեն տարբեր ինքնություններ, սակայն այն սահմանելու համար ընդգծում են իրենց միասնությունը[18]:

Ռ. Բրուբեյքըրը հայրենադարձությունը դիտարկում է որպես ազգային պատկանելության *պրակտիկ* դրսևորում[19]:

Ելնելով վերը նշված քննարկումներից՝ Ս. Գասպարյանն առաջարկում է *հայրենադարձություն* եզրույթի փոխարեն օգտագործել *սոջերներ* (*sojourn*) «նորեկ» եզրույթը, որն ըստ նրա՝ առավել ճշգրիտ է արտահայտում վիճարկվող *միգրացիա*յի յուրահատկությունը, քանի որ Հայրենիք վերադառնալը կարող է լինել փորձնական *միգրացիա* կամ նախադրյալ վերջնական *միգրացիա*յի համար[20]:

*Միգրացիա*յի մասնագետներ Ռ. Քինգը և Ա. Քրիստոուն «հայրենադարձություն» եզրույթի փոխարեն առաջարկում են օտագործել «էթնիկ վերադարձ» եզրույթը, որն ավելի ճկուն է՝ շեշտելով վերջինիս զգայական հայեցակետը[21]: Այլ կերպ ասած՝ նշված հետազոտողներն ընդգծում են *միգրանտ*ների և նրանց սերունդների՝ «Հայրենիք»-ի *սուբյեկտիվ* ընկալումը: Մշակութային

15 Ragazzi 2014, 74–76.
16 Kasbarian 2015, 359.
17 Pawłowska 2017, 94–98.
18 Anderson et al. 1991.
19 Brubaker 1994, 47–50.
20 Kasbarian 2015, 365.
21 King et al. 2014.

մարդաբան Կ. Պավլովսկան կարևորում է վերադարձը՝ որպես աստիճանական և *դինամիկ* գործընթաց, որը բնութագրվում է *միգրանտ*ների բարձր շարժունակությամբ. նրանք «որոշում են վերադառնալ» իրենց պայմաններով՝ Հայրենիք այցելել այն հաճախականությամբ, որով ցանկանան[22]: Ավելին, ուսումնասիրելով հայկական փորձը՝ նա կարծում է, որ Սփյուռքի վերադարձը հաճախ փորձարարական և ժամանակավոր է:

Եզրահանգումներ

Հայրենադարձության սահմանումը՝ որպես վերադարձ «հայրենիք», խնդիրներ է հարուցում եզրույթի հարցում, քանի որ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Սփյուռքի տարբեր սերունդների և *միգրացիոն* խմբերի մի մասը ՀՀ-ը չի դիտարկում որպես պատմական Հայրենիք կամ չի համարում իր ծագման երկիրը: Այս մոտեցումն առնվազն բնորոշ է Առաջավոր Ասիայի հայ համայնքներից Լոս-Անջելես տեղափոխվածների, Արևմուտքում ծնվածների և նրանց սերունդների համար: Սփյուռքի քաղաքականության տիպաբանության մեջ «հայրենադարձություն» եզրույթն առավել տիպական է առաջին սերնդի աշխատանքային *միգրանտ*ներին: Որպես այդպիսիք կարող են նշվել ՀՀ-ից ՌԴ կամ այլ երկրներ տարբեր պատճառներով մեկնածները, որոնք կրկին վերադառնում են իրենց ծագման երկիր:

Ավանդական Սփյուռքի համար՝ որոշ փորձագետներ «հայրենադարձություն» եզրույթի փոխարեն առաջարկում են օգտագործել «էթնիկ վերադարձ» եզրույթը: Հայկական Սփյուռքի պարագայում այդ եզրույթի օգտագործումը ներառում է ինչպես վերջին 30 տարիներին ՀՀ-ից արտագաղթածներին, այնպես էլ ավանդական Սփյուռքի տարբեր սերունդների, որոնք վիճարկում են *միգրացիայ*ի այդ եզրույթը: «Էթնիկ վերադարձ» եզրույթի կիրառման ժամանակ *միգրացիայ*ի առանցքում կարևորվում է ներգաղթողների էթնիկ պատկանելության գործոնը: Այս պարագայում ՀՀ վերադառնալը կարող է լինել փորձնական և ժամանակավոր, ինչը կարող է նախադրյալ ստեղծել նրանց վերջնական վերադարձի համար: «Հայրենադարձություն» եզրույթը պատմական և արդի շրջանում լայն կիրառություն ունի Սփյուռքի հետ հարաբերություններում. այն համարվում է պետության քաղաքականության կարևոր մաս, որն, իր հերթին, դժվարացնում է նոր եզրույթների ներմուծման և օգտագործման խնդիրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ, ԳԱԼՍՏՅԱՆ 2023
Գալստյան Մ.Վ., Գալստյան Ն.Մ., Լոսից եկող կամ. հայրենադարձման խնդիրներն ու հնարավորությունները Լոս-Անջելեսի հայկական համայնքում, Երևան, «Նյումեգ», 2023, 272 էջ:

ԳԵՈՐԳՅԱՆ 2013
Գևորգյան Լ.Ա., Սփյուռքահայության ներգաղթի իրավական կարգավորման հիմնախնդիրը «Մեծ հայրենադարձության» և միջազգային փորձի համատեքստում // ՎԷՄ համահայկական հանդես, 2013, № 4/44, 9–29:

22 Pawłowska 2017, 93–94.

ANDERSON 1991
Anderson B., Richard G., Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London, "Verso", 1991, 224 p.

ARMSTRONG 1976
Armstrong J., Mobilized and Proletarian Diasporas // American political science review, 1976, № 70/2, 393–408.

BRUBAKER 2005
Brubaker R., The "Diaspora" diaspora // Ethnic and Racial Studies, 2005, № 28/1, 1–19.

BRUBAKER 1994
Brubaker R., Nationhood and the National Question in the Soviet Union and Post-Soviet Eurasia: an Institutionalist Account // Theory and Society, 1994, № 23, 47–78.

KASBARIAN 2015
Kasbarian S., The Myth and Reality of "Return"-Diaspora in the "Homeland" // Diaspora: a Journal of Transnational Studies, 2015, Vol. 18/3, 358–381.

KING et al. 2014
King R., Christou A., Second-Generation "Return" to Greece: New dynamics of transnationalism and integration // International Migration, 2014, Vol. 52/6, 85–99.

KUNZ 2012
Kunz R., The Discovery of the Diaspora // International Political Sociology, 2012, Vol. 6/1, 103–107.

PAWLOWSKA 2017
Pawłowska K., Ethnic Return of Armenian Americans Perspectives // Anthropological Notebooks, 2017, Vol. 23/1, 93–109.

RAGAZZI 2014
Ragazzi F., A Comparative Analysis of Diaspora Policies // Political Geography, 2014, № 41, 74–89.

SAFRAN 2009
Safran W., Chapter Three. The Diaspora and the Homeland: Reciprocities, Transformations and Role Reversals // Transnationalism, Brill, 2009, 75–99.

SHAIN 1994
Shain Y., Ethnic Diasporas and US Foreign Policy // Political Science Quarterly, 1994, № 109/5, 811–841.

SHEFFER 2003
Sheffer G., Diaspora Politics: at Home Abroad, Cambridge University Press, 2003, 308 p.

TÖLÖLYAN 1996
Tölölyan K., Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment // Diaspora: a Journal of Transnational Studies, 1996, № 5/1, 3–36.

VERTOVEC 1997
Vertovec S., Three Meanings of "Diaspora": Exemplified among South Asian Religions // Diaspora: a Journal of Transnational Studies, 1997, Vol. 6/3, 277–299.

WAHLBECK 2002
Wahlbeck Ö., The Concept of Diaspora as an Analytical Tool in the Study of Refugee Communities // Journal of Ethnic and Migration Studies, 2002, Vol. 28/2, 221–238.

***Mihran V. Galstyan**, Dr. Habil., Asspciate Prof.*
Institute of Archaeology and Ethnography, NAS of RA
Yerevan State University

THE TERM "REPATRIATION" IN THE CONTEXT OF MODERN PROCESSES OF DIASPORA: THE CASE STUDY OF THE ARMENIAN COMMUNITY OF LOS ANGELES

Keywords: Diaspora, repatriation, homeland, return, migration groups, identity, heterogeneous.

The role of the homeland in diaspora and the preservation of identity is well discussed in theoretical approaches to diaspora. However, there are very few studies that address the issue of repatriation. In several countries that have diasporas, "repatriation" as a process is absent from the agenda of their governments because the diaspora is considered a strategic resource. The term came into circulation after the Second World War due to the repatriation of hundreds of thousands of people who, due to hostilities, had to leave their countries of former residence. This extended to prisoners of war, displaced persons, refugees, and expatriates trying to regain citizenship seven rights and return to their homeland.

Definitions of repatriation in the international literature are mostly state-centric. One part of the researchers dealing with these issues defines it as the return of a person to his country of origin, supporting or calling for it; the other part attributes the concept to labor migrants, whose first generation has clear ties to their homeland/state. In Armenian reality, repatriation is generally perceived as the "return" of ethnic Armenians to Armenia, and this process is considered the most acceptable and encouraged form of immigration.

This article seeks to answer a key question. To what extent is the term "repatriation" applicable to different generations and sub-ethnic groups of the traditional Diaspora whose birthplace is not, in fact, Armenia? On the other hand, some parts of the traditional Diaspora contest the idea of Armenia as a homeland, and according to the results of the survey, they consider it the birthplace of themselves or their ancestors. A significant part of the diaspora has no previous experience living in Armenia, and the concepts of "homeland" and "return" are problematic when using this term. By using the term "repatriation", we state that the identity of the Diaspora has not changed in nearly a hundred years, and it has not become heterogeneous, which is a very debatable approach. Some researchers, referring to this issue, note that both entities (Diaspora Armenians and the Republic of Armenia) do not relate by origin but are forced to be in close relations due to external forces. Establishing official ties with Armenia as a homeland is outside their priorities.

This research also focuses on all the new proposed terms that can comprehensively reflect the current realities of the Armenian diaspora.

The article is based on the interviews conducted by the method of biographical research among 20 families of different generations and migration groups of Los Angeles Armenians and 19 families who immigrated and settled in Armenia.

***Мигран Вардгесович Галстян**, д.и.н.*
Институт археологии и этнографии, НАН РА
Ереванский государственный университет

ТЕРМИН «РЕПАТРИАЦИЯ» В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ПРОЦЕССОВ ДИАСПОРЫ: ПРИМЕР АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ЛОС-АНДЖЕЛЕСА

Ключевые слова: диаспора, репатриация, Родина, возвращение, миграционные группы, идентичность, неоднородный.

В теории диаспор чаще всего обсуждается роль Родины в существовании диаспоры и сохранении идентичности, однако ограниченное количество исследований посвящены вопросу репатриации. В ряде стран, имеющих диаспору, процесс «репатриации» отсутствует в повестке дня правительственных инстанций, поскольку диаспора традиционно рассматривается в качестве стратегического ресурса.

Термин «репатриация» вошел в оборот после Второй мировой войны в результате возвращения на родину сотен тысяч людей, вынужденно покинувших из-за военных действий страны прежнего проживания. Это распространялось на военнопленных, переселенцев, беженцев, эмигрантов, пытающихся восстановить гражданские права и вернуться на родину. Определение «репатриации» в международной научной литературе в основном государствоцентрично. Часть исследователей, занимающихся вопросами репатриации, определяют ее как возвращение человека в страну происхождения, стремление оказать помощь Родине или призыв к этому, другая часть приписывает данную идею трудовым мигрантам, первое поколение которых обладает четкой связью со своей Родиной/государством.

В армянской действительности репатриация обычно воспринимается как «возвращение» этнических армян в Армению, и этот процесс считается наиболее приемлемой и поощряемой формой иммиграции.

В статье обсуждается вопрос применения термина «репатриация» к разным поколениям традиционной диаспоры, миграционным и субэтническим группам, родиной которых фактически не является Армения. В то же время, некоторая часть традиционной диаспоры по результатам опроса считает Армению лишь местом рождения себя или своих предков, не ассоциируя ее с родиной. Значительная часть диаспоры не имеет предыдущего опыта проживания в Армении, и понятия «Родина» и «возвращение» становятся проблематичными при использовании данного термина. Используя термин «репатриация», порою высказывается предположение, что идентичность диаспоры почти за сто лет не изменялась и не стала неоднородной, что, на наш взгляд является весьма спорным подходом.

Некоторые исследователи, обращаясь к этому вопросу, отмечают, что среди армян диаспоры и Республики Армения имеются представители, будучи родом не из Армении, однако находящиеся в тесных отношениях друг с другом в результате воздействия определенных факторов. И порою, установление официальных связей с Армением как с Родиной не входит в число их первоочередных задач. Одной из основных задач статьи является также акцентирование внимания на новых предлагаемых терминах, способных комплексно

отразить современные реалии армянской диаспоры. Основой для анализа послужили интервью, проведенные методом биографического исследования в 20 семьях разных поколений миграционных групп армян Лос-Анджелеса и в 19 семьях, иммигрировавших и обосновавшихся в Армении.

Ներկայացվել է՝ 18.01.2025,
գրախոսվել է՝ 08.04.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7